


ՄԻՍՏԵԱԼ ԵՄԱՆՆԵՐԻ ԶԱՄԱՐ

Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
Բաժանորդագրին կԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ



To the DICKRIS PUBLISHING COMPANY
301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as
Second Class Mail Matter.

Խմբագրութեան ղրկուած ծրար
կամ նամակ ետ չեն ղրկուիր:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 91

ՆՈՒ ԵՆՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՕԴՈՍՏՈՍ 19, 1899

ԳՆՆ 3 ՍԷՆԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկայի Հայ Հրատարակչական
ընկերութիւնը. — Արեւը Պօսթօնէն
չէ, Նիւ Իորքէն է. — Աչքը Զիվա-
նին աչքը յոյս. արեւը որ այդ է. —
Կրթական գործին շուրջը. — Կա-
նոնադիր Հայուհեաց Ընկերութեան
Ուստրի. — Քաղաքական. — Սա-
րաճեան արագան և իւր զրպարտի-
չը. — Կարճ պատասխան մը. — Նա-
մակ Պօսթօնէն. — Ներքին լուրեր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Մամուլը աշխարհի մէջ իր հոկայ
գերը սկսելէն մինչև այսօր ի՛նչքան
ձայները խեղդուած պիտի մնային,
ի՛նչքան փայլուն միտքեր պիտի մըթ-
նէին և ի՛նչքան գրական գանձերը
անյայտութեան մէջ թաղուած պիտի
մնային, եթէ մարդկային ընկերու-
թեան անգամները ձեռք չը տային
իրար:

Մեր մէջ գրականութիւնը, զոչո-
ղութիւն, անձնութիւն ըսել է:
Հայ մամուլը իւր ա. ր. գ. սկսելէն
մինչև ներկայ տարուան շնորհով ու բու-
ղբներով լի է: Մեր ժողովուրդը չէ
հասած այն գիտակցութեան որ գիրք
ու լրագիր օրուան պահանջ համարէ,
մտքի սնունդի կարիքը զգայ: Հետե-
ւաբար հրատարակութեանը ան-
հասական զոչողութեամբ միայն կր-
ցած է յարատեւել:

Մեր գաղութը, որ հեռու ու ան-
ջատ կը գտնուի մայր հայրենիքէն,
անոր հետ կապող, անոր յիշատակե-
րով ոգորող շղթայ մը պետք է. և
այդ շղթան մամուլն է: Հայ գաղթա-
կանութիւնն օրէ օր կը ստուարանայ,
զանի պետք է Հայ պահել. միտքը
չուտ կօտարանայ, սրտին աղբակ մը
պետք է, առ կը պահէ մեզ:

Մեր հորիզոնին վրայ ստուպի
նման փայլած ու մար մտած են աս ու
ան թերթերը: Յարատեւութիւնը չէ
եղեր, որովհետև ձեռնարկ ըրած են
անհասական ոյժերը, կամ այնպիսի
ընկերութիւնները, որոնք նիւթական
չաճ են ակնկալած: Երբորդ պատ-
ճառ մըն ալ կայ, որ ստոնք եղած
են այլ և այլքներու ու յայտարարու-
թեանց հաւաքածուներ, կամ ըրած
են խոշոր արտասպումներ արտա-
նահանգն այս ու այն թերթէն,
գրականութիւնը բացակայ է եղեր:

ՏԻԳՐԻՍ իւր ներկայ ուղղու-
թեամբ, օգտակար նիւթերով կարճ
ժամանակի մէջ կրցաւ ժողովուրդի

համակրութեան արժանանալ և օր-
ուան պահանջը դարձաւ, և ահա՛ այս-
օր այդ համակրութիւնը կուգայ ոյժ
տալու և ընդ միշտ ապահովելու Հայ
թերթի մը գոյութիւնը Ամերիկայի
մէջ:

Գաղթականութեան կարևոր
անձնաւորութիւնները, այդ ապահու-
վութիւնը՝ զոչող հրատարակչական
ընկերութեան մը մէջ գտան և կազ-
մակերպուեցաւ "Ամերիկայի Հայ Հը-
րատարակչական" ընկերութիւնը: Կը
թողուցը որ ընկերութեան ծրագիրը
լայտ տեսնելով պարզէ իր նպատակը,
միայն աս կուեղանք, որ իւր միակ
ջանք պիտի ըլլայ գրականութեան
միջոցաւ բարձրացնել ընկերական ու
մտաւորական կեանքը:

Ասկէ ետք ՏԻԳՐԻՍ պիտի հրա-
տարակուի Հայ Հրատարակչական ըն-
կերութեան կողմանէ, իւր արդի խմ-
բագրութեամբ ու ուղղութեամբ:

Որովհետև ՏԻԳՐԻՍ անունին վը-
րայ գանազան մարդիկ, գանազան
խնդիրներ կը յարուցանեն, ընկերու-
թիւնն ու խմբագրութիւնն յարմար
դատեց այդ անունը փոխել և խմբա-
գրութեան նախօրոք որոշած անունը
ընդունել՝ "ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ":

Այս հեռու որ աշխարհին մէջ,
պիտի ըլլայ Հայրենեաց արձագանքը,
Հայրենեաց ձայնը:

Մեր բոլոր բաժանորդները երկու
թիւ յետոյ ՏԻԳՐԻՍ փոխարէն պիտի
ստանան "ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ":

Կը խնդրէինք մեր ապագի ունե-
ցող բաժանորդներէն որ պարտաձանաչ
գտնուէին և իրենց հաշիւները մաք-
րէին, որով գործին աւելի ղերու-
թիւն տուած կըլլան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՆԻԼ ՊՕՍԹՈՆԷՆ ՁԷ, ՆՈՒ ԵՆՈՐ-
ՔԷՆ Է

Պատասխան «Արև»ին

Կը ցաւինք թէ «Հայրենիք» թեր-
թին մէջ մեր մէկ յօդուածը քննա-
դատող «Արև»ին ո՞վ և ո՞ւր ըլլալու
մասին մեր "Հատարակ մահկանացու"
թղթակցին հետ տարակարծիք պիտի
գտնուինք:

Արեւը այդ թերթի խմբագրու-
թիւնն է և այդ յօդուածը այդ խմ-
բագրութեան մէջ թղթուած է նիւ
եորք:

Մեր փառսերը սանք:
Նախ. եթէ այդ յօդուածագիրը
ո՛չ Հնչակեան էր, ո՛չ ալ Դաշնակ-
ցական մը, ու հետևապէս եթէ կապ
չունէր այդ խմբագրութեան հետ,
չառ օրինաւոր ու բնական բան մը

պիտի ըլլար որ այդ յօդուածը ուղ-
ղակի մեզի ղրկէր:

Ա. Որովհետև, իր ըսելովը, ինք
մեր բաժանորդներէն է:

Բ. Որովհետև անով իր հարցերը
մեզի կուղղէ և պատասխան մեզմէ
կըպասէ:

Գ. Եթէ այդ թղթակցը - Հայ-
րենիք- թերթին հետ կապ ունենա-
լով մեր քննադատական յօդուածէն
ուղղակի վիրաւորանքը չզգար, եթէ
բոլորովին չէզոք անձնաւորութիւն
մը եղած ըլլար, երբէք մ'ոյեգնու-
թեան կուրութեան մը գարնուելու
փորձութիւնը պիտի չունենար, հե-
տեաբար մեր այնքան պարզ տեսու-
թիւնները այդպէս ծիծաղելի տար-
բիտակութիւնով մը չպիտի խեղա-
թիւրէր:

Դ. Այդ յօդուածին վրիժառու-
թեան այն կերպը զոր «Հատարակ
Մահկանացուն» շատ լաւ նկատած է,
«կրօնքիս հայկոյց» իւր քաղական ճա-
րահատ ամբաստանութիւնը, Հայրե-
նիքի խմբագրին յատուկ եւ հաս-
տատուած սովորութիւնն է:

Այս վերջին պարոնը իրեն թեր-
թին մէջ տքթ. Արշակունիի դէմ հը-
րատարակուած մէկ անազնիւ յօդ-
ուածին ձախողութիւնը տեսնելէն
ետք՝ տքթ. Արշակունիի զայրութիւնը
Հնչակեաններուն ուղղելու նպատա-
կաւ գացեր և անոր ըսելէր թէ "Այդ
յօդուածը գրողը Հնչակեան մի է":
մինչդեռ այն յօդուածը գրել տու-
ղը ինք և հրատարակողը ինքն էր:
Հնչակեանները որ և է պատասխանա-
տուութիւն չունէին:

Ե. Եթէ այդ յօդուածը գրուէն
գրուած ըլլար, թերթի մը խմբագ-
րութիւնը պէտք էր անոր ծիծաղա-
չարժ անհեթեթութիւնները տեսնել
ու անոնց հրատարակութեան համա-
կերպութիւնով ինքզինքը ծաղրելի
չհանդիսացունէր: Մարդիկ իրենցմէ
ծնած անհեթեթութիւններն է որ
չեն տեսներ, ուստի այդ «հիանալի»
փատարանութեան թուխը այդ
խմբագրութիւնը ինք նստած ըլլա-
լու է:

Ինչ և է այդ «չլիւս» թուխը ու
նստած կըլլայ թող ըլլայ. անոր յա-
ռաջ բերած հարցերուն պատասխանը
սանք:

Նախ «Արև»ին առաջին հատու-
ած անենք, որով կ'ըսէ. «Տիրբիսի
խմբագրութիւնը Հայ կանանց բեմէն
խօսելու իրաւանց մասին տգեղ բաղ-
դատութիւն մը կընէ, գաննք այլա-
սերած կողմերու կը նմանցունէ: Մի-
թէ...»

Մենք կանանց խօսելուն դէմ ո-
չինչ ըսած ենք. իրաւունքի խնդիր
երբէք յարուցած չենք. մեր խօսքը
կ'ընչ և կ'ընչ ցիլին բեմը եւ-
լի լուսն վրայ էր, զոր իբրև գաղա-
փար հե՛ռի հեռապատկեր անուանած
էինք:

Մենք անձամբ Հայ տիկիներու
խօսել տուած ենք բեմերէ և միշ-
ալ պիտի ջանանք որ խօսին:

Ինչո՞ւ այս ծիծաղելի խեղաթիւ-
րութիւն կը ղրկուի:

Պր. «Արև»ը ոչ թէ ապուշութե-
նէն, այլ նենգամտութենէն՝ որ սա-
կայն ապուշութենէ տարբերութիւն
չունի, կ'ուզէ իրական սեռը մեզի
դէմ գրգռել, բնակով իր մենք զա-
նոնք կողմերու նմանցուցած ենք.
մինչդեռ մեր նմանցուցածները եր-
կու խնդիրներուն հանգամանքներն
են, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ խնդիր
ըլլար թէ, պ. Արևը իշով թէ ջո-
րիով ճամբորդելու է, այդ պարագա-
յին նա ո՛չ ջրի լըլլար ո՛չ ալ էչ.
միայն թէ, ըստ պտուտական սովո-
րութեան, էչը յիշելու հետ ըսելու
էր. «Հեռի լողաց, հեռի ձեր սուրբ
երեսէն. խօսքս անոր. երեսդ վարդի
ջուր.» ևն. ևն., որ արմարին սիրտը
չվիրաւորուէր ինքզինքը նմանցուած
կարծելով:

Երբ որ մեր թերթը միայն ձեզի
պէսներուն համար խմբագրենք, Ա-
րև ճան, հեռու ըլլայ այդ օրը, այն
ատեն այդ պտուտական սեռը ձեռք
կառնենք, ձեր արմար ղերազդա-
ծութիւնը չվիրաւորելու համար:

Կը հարցունէք թէ «Մինչ մենք
քաղաքական ազատութիւն կը փրճա-
նենք, կը վայելէ՞ մեզ գերել Հայ
կնոջ իրաւունքները. թուրքէն ի՛նչ
տարբերութիւն պիտի ունենանք բըռ-
նապետական այս ընթացքով...»

Արև եղբայր! Եթէ բռնապետու-
թեան սահմանը Հայ կնոջ հայկական
եկեղեցիին բեմէն խօսելու թոյլատու-
ութիւն չըլլալն է, մենք այդ «բըռ-
նապետութիւն» սիրով կողո՞ւնենք.
առ այժմ մեզի կ'օգտէ որ Հայ
կղերը խօսէ եկեղեցւոյ բեմերէն,
իսկ Հայ մարդը, Հայ կինը՝ ազատ
բեմերէն:

Եթէ մեր թերթերէն ունեցած
տարբերութիւնը պիտի որակուի կինը
հայկական եկեղեցիին բեմը հանելուն
մէջ, շարժել այդքան տարբերութեան
մը համար մեր թափած ոչ այնքան
արեւնի հեղեղները, այլ ահանջ մը
իսկ կարել տալը:

Կը հարցունէք. «Մի՞թէ Հայ կնոջ
խօսելու իրաւունքը Հայաստանի այ-
րաւերած կողմերու հետ համահաւա-
սար մակարդակի վրայ կը կենայ»:

Գուք կրկին խօսելու և եկեղեցիին
բեմը կըլլել իրարու հետ կը շփոթէք.
թող խօսին կինները որքան որ կու-
զեն. խնդիրը անոր եկեղեցիին բեմը
կըլլալուն վրայ է:

Կը հարցունէք. «Ի՞նչ կայ ու եկի
անմիջական և պահանջկատ խնդիր,
քան որ և է բռնութեան լուծի թո-
թափումը»: Հետեաբար ըսել կու-
ղէք. կինը եկեղեցիին բեմը հանենք,
որ «բռնութեան ձեռն լուծելը» վեր-
նան: Այդ է՝ ըստ ձեզ. մեր այժմ-
եան «անմիջական ու պահանջկատ
խնդիրը»: Յաջողութիւն ձեզ: Այն
ատեն մենք ալ կը բացառանք հե-
-եթանիկ ենք:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԼՈՅՍ ԱՐԵՒԸ ՈՐ ԱՅԴ Է

Սիրելի աշխատողներ, Նախ և առաջ կ'ընդհանրենք ձեր շնորհակալությունը...

Հայ երիտասարդներու դասակարգ մը կայ. որոնք յեղափոխական են, որ իրենց ինքնուրույնութեան մեծամասնութեան և զոտոզութեան...

Այդ արեւին գրած խնդրին մէջ յեղափոխականի ոչ յեղափոխականի խնդիր չէր, ո՛վ իրեն հարցոց, որոնք հոգ, ի՛նչ կուզէ այն թող ըլլայ:

Այդ յոգուածը տեսածին պէս ծիծաղալ չըզոյցի զպակ քանի մը ընկերներու առջև, որոնք սաղութեան մը ինծի նայել սկսեցին: Պատճառը ըսեմ:

Երբ ՏԻԳՐԻՍԻ մէջ կարգացի Հայ կանանց եկեղեցիին բնակէն խօսելուն հետապասկեր ըլլալուն իր օրինակ այլոսներու կողմէն խնդրել, այն ասան ըսի թէ զիմացի պարսկները այդ հարուածը չպիտի ուսնեն, նոյն ասան անոր գէժ ըսելիք բան մ'ալ չեն կրնար գտնել, մտքին եկաւ թէ մեր «փնթի» թիւրքերուն օրինակին պիտի հետեւին, որոնք իրենց հակառակորդին գէժ երբ ըսելիք մը չգտնեն:

«Կրօնքի» հայտնեցը կըսեն դատարանի առջև: Արեւ կը շարունակուի իր ընկերներ, միայն թէ Հայ տիկնիներուն վրէժխնդրութեանը գէթ ՏԻԳՐԻՍԻ գէժ գրքերու նպատակաւ կըսէ թէ «ՏԻԳՐԻՍ Հայ կիները այլապէս կողմէն կը նմանցունեն», այդ պարտնք եթէ կովի մը շափ խելք ունենար այդ ասուլի բանածուութեանը չէր ընէր, անոր այ խելքին ու սրտին մօտ խմբագրութեան մը կը գտնուի որ իր վերջին քերտոյի տեղ այդ պէս ապուշ գրութեան մը կը հրատարակէ:

ՏԻԳՐԻՍ իր կրկնորդ անօրինութեամբ հրատարակուելէն ի վեր աճենէն զեկեղեցի յօդուածները նընդհանրած մեր իդակուն սեռին, ամեննէն աւելի ճանաչած է անոնց գերին բարձրութեանը, ես երբեմն փորձուեք եմ մտքէս անցունելու թէ կը շարունակուի: Այժմ ինչպէս այդ խմբագրութեանը կրնայ այնքան վար իջնել որ Հայ կիները այլապէս կողմէն նմանցունեն:

Այդ նմանութեանը ձեր գտնելին մէջ է Պ. Արեւ:

ՀԱՍՍՐԱԿ ՄԱՀԱՆԱՑՈՒ ՊՕՍԹՕՆ Օգոստոս 13

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՇՈՒՐՁՆ

Ներքին ու արտաքին խնդիրներ, վէճեր և կռիւներ գրեթէ անպակաս եղած են մեր Ազգին մէջէն, անոնք որդեգրու նման մեր մտքերու մէջ մտած՝ աւերումներ կը կատարեն, սպառնալով մինչ իսկ մեր կենաց:

Ասան մը սուլթանի դատան սուրբն էր որ ալ ու ձախ կը կոտորէր հազարաւորներ: Այս սրոյ աւերումն մեծ եղաւ, անգութ և փառասէր թագաւորն չանոց մեր պաղատանցոց հաղարաւոր հոգեբով: Դեռ կոտորածներու արեւմտի աղաղակներն հեռացած չեն մեր ակունքներէն, և ոչ ալ սրտածմլիկ տեսարաններու տխուր արհաւիրքն: Սուլթան չքաւականացաւ իր գարշելի արարքներով և այժմ սկսած է մեզ բարոյապէս ալ կործանել, քանզի մեր կրթական հաստատութիւններն, եկեղեցիներն, դպրոցներն և գաղթեցնելով՝ հրապարակի վրայ գտնուող Հայ թերթերն որոնք մինչ իսկ շիտակին սխալ և սխալին շիտակ ըսելու հարկին ենթարկուած էին:

Դեռ այլ և այլ գաւառաց մէջ թէ և կը գտնուին գաղտնիք, սակայն անոնք ալ, մարելու մօտ պլպլըլացող ճրագի մը պէս միայն մութին մէջ կը փայլին: սակայն մի՛ մտռնաք թէ՛ այդ գաղտնիքը կրթական սխալ մեթոտներու պատճառաւ, իրենց բուն նպատակէն հեռի կը գտնուին. և օգտակար ըլլալու տեղ աւելի վնասակար են. հոն երթող ծաղիկ Հասակները դատան ուսուցիչներու ձեռաց տակ կը խամրին արեւակէզ ծաղիկ մը պէս: Միտքն աւելի արժեքաւոր է քան մարմինը, մեռցնելու ուղի մը հանձնար. անգոյշ ու կրթական սխալ մեթոտներով աւելի մեծ ոճիր մ'է քան մեղքն մարմնայն դէմ:

Սիրելի ընթերցողք, անկարելի է մեզ մեր անտեսական վիճակն բարեւոքել, ու բարձր աստիճանի մը հասնել, մինչև որ չենք զգացած կրթութեան արժէքն, օրինակ տաննէն ներկայ քաղաքներու ազգերն, ի՛նչ է անոնց յաջողութեան հսկան գաղտնիքն, սչինչ, բայց եթէ զարգացում և դատարարութեան:

Ձգենք այժմ արական սեռի կրթութեան գործն, որ գէթ վերջնաբեր ըլլալու կարեւորութեան ստացած է, բայց ցաւալի է տեսնել թէ՛ մեր իրական սեռի կրթութեան բոլորովին զանց առնուած է, անոնք ամենն ալ առ հասարակ ազգէտ ու խեղճ կը մնան:

Երկնցէք թէ, այսօրուան տղաքըն սպառազ ճնողներ պիտի լինին, որոնցմէ կ'սխալու է ընկերական վիճակ, ընտանիք ևս...: Սուլթան սրով սպաննեց ու կողոպտեց, իսկ մենք անկէ աւելի վայրագ պիտի ըլլանք, երբ մեր գաւառացի կրթութեան գործին հոգ չընտանինք: Պէտք է գիտնալ թէ անոնց պատասխանատու պիտի ըլլանք սպառազին: Երբ զգանք կրթութեան արժէքն ու ջանանք անոր յառաջադիմութեանն, յն ասան, միայն այն ատեն մը պիտի հասնինք ու վայելենք:

Ամենէն թանկագին ու նուիրական մեռէրն. օժիտն զոր կրնանք տալ մեր պ սեպակ, կրթութեանն է: Տուէք այդ գիտութեան ընդարձակ աղբիւրէն ձեր գաւառաց այնչափ որչափ կրնանք և իդակուն սեռին ալ հաստար բաժին հանեցէք:

Տ. Պ. ԹԱՇՃԱՆՆ ՊՕՍԹՕՆ (Ուսանող)

ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅՈՒՆՆԵՍՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ. Ընկերութեան նպատակն է Ուսարի մէջ գտնուած Հայ կանանց և օրիորդաց առիթ հայթայթել ի մի վայր համախմբուելով ուսումնասիրելու պարտաճանաչ մօր և ժըրաքլուկ կնոջ մը ամեն պարտաւորութիւնները ու պէտքերը, և թէ յաճախակի միմեանց հետ տեսնուելու առթիւ յարաբերութիւն և մտերմութիւն մշակել, նաև օժանդակել ըստ կարելոյն Ս. Փրկիչ եկեղեցւոյ գրադարանի ճոխացման ու Հայաստանի սրբոց պահպանութեան:

Միջոց. Ընկերութիւնն իւր նպատակի իրագործման գլխաւոր միջոցը կը համարի Հաստատութիւնը մի Ս.ՊԱՏԱՆԻՍՏԱՆԻՍ, որ տեղի պիտի ունենայ առ այժմ գոնէ ամիսը մի անգամ, ուր ձեռնհաս անձինք պիտի հրաւիրուին դասախօսել կանանց բարոյական պարտաւորութեանց մասին ընդհանրապէս և նոցա առ անին պարտաւորութեանց մասին մասնաւորապէս. որպիսիք են՝ դատարարութիւն մասնական, առողջապահութիւն, մանկատանութիւն, տնտեսութիւն, տան կահաւորում կամ հանդերձանք, խոհարարութիւն, կուսցք, արդուկ, կարու ձեւ, ձեռագործ, երգ, դաշնակ, քաղաքավարութիւն ևն:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Թողուած Ա. — Ուսարի մէջ ընկող ամեն Հայ տիկին կամ չափահաս օրիորդ, առանց կրօնի խտրութեան, կրնայ անդամակցել իւր ընկերութեան, արձանագրելով սեղ անունը ու հասցէն ընկերութեան տնտեսարին մէջ և վճարելով ամիսը 5 սենթի պէտք յարանի ծախուց:

Թող. Բ. — Անդամուհիք միայն իրաւունք պիտի ունենան մասնակցելու ընկերութեան գործոց և ընտրութեանց:

Թող. Գ. — Եթէ մէկը ուզէ հրատարակ անդամակցութեան պարտի գրաւորագէտ յայտնել ընկերութեանը Տնօրէն ժողովոյ՝ բացատրելով պատճառը:

ԼՍԱՐԱՆ

Թող. Դ. — Ընկերութեանն ոչ անդամակցի տիկիններ և օրիորդներ ալ կրնան ներկայ լինել Հասարակ դասախօսութեանց, երբ որ ուզեն, բայց անդամուհիք պարտին ամեն գումարմանց անպատիւ ներկայ գտնուել: Եթէ բացառիկ պատճառ մը չարդիւն զիրենք, որպէս զի դասախօսութիւնը արդիւնաւորուին և թէ ի պահանջել հարկին կայանալիք որոշմանց մասնակցին:

Թող. Ե. — Հասարակական գումարմանց մէջ ոչ անդամուհիք ևս կրնան ընկերութեանն նպատակին յաջողութեան և արդիւնաւորութեան մասին խօսիլ և առաջարկներ ընել, բայց որոշմանց ասան ձայն և քուէ չեն կրնար ունենալ:

Թող. Զ. — Դասախօսութեանց հրահանգիչ մասերը համապատասխան կը արձանագրուին Ատենագրութեան և Տնօրէն ժողովոյ միջոցաւ կը հաղորդուին ասանձին բոլոր անդամուհեաց, որք պարտին հետեւել նոյն հրահանգ քործարարութեան:

Թող. Է. — Հասարակական դասախօսութեանց միջոցին արդիւնաւէ խօսակցելով կամ հարց բարձրացնելով խափանարար լինել դասախօսութեան, իսկ եթէ մէկը օրուան դասախօսութեան մասին գիտողութիւն

մը կամ հարցում մը կամենայ ընել կրնայ յետ աւարտման դասին խօսիլ ատենակցարին թոյլատրութեամբը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎ

Թող. Ը. — Անդամուհեաց ընդհանուր ժողովոյ պաշտօնն է՝ ընտրել եօթը անդամուհիներէ բաղկացեալ տնօրէն ժողով մը, որ վարչական մարմինն է ընկերութեան, ձայնից առաւելութեամբ որոշել այն ամեն խնդիրները՝ զորս հարկ կը տանէ Տնօրէն ժողովը ներկայացնել իրեն, և իրանալ տնօրէն ժողովոյ պաշտօնավարութեան շրջանին՝ պահանջել նորա գործառութեանց տեղեկագրերը և ստանալ հաշիւները յաջորդին յանձնելու համար. իւր իրաւունքն է նաև ընկերութեան կանոնագրին վերաբերելութիւնը:

Թող. Թ. — Անդամակցաց ընդհ. ժողովոյն, ինչպէս և յարանական գումարմանց՝ կը նախագահէ Տնօրէն ժողովոյ Ատենագրութեան, արձանագրութիւնները կը կատարէ Տնօրէն ժողովոյ Ատենագրութեան: Միայն Տնօրէն ժողովոյ համարաւորութեան նստին՝ առ ժամանակեայ դիւան մը կ'ընտրուի անդամակցաց Ընդհանուր ժողովէն:

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱԳ

ԲԵՆԷՍ ՅՐԱՆՍԱ Օգոստ. 12

Տրէյֆիւզի երկրորդ հրապարակային դատավարութիւնը այսօր սեղի ունեցաւ, սկսելով առաւօտեան ժամը 6.30 ին: Զորքը արթնելէն մինչև ուրբաթ առաւոր նիւտերը դռնփակ եղան:

Այս առաւոր ամենակարեւոր վկայներն էին զօրավար Մէրսիէր, Տրէյֆիւզի նախկին դատարարութեան ատենի Գաղղոյ պատերազմական նախարարը և նոյն ատենի նախագահ Քալմիլ Բէրիէր:

Առաջին վկան որ Տրէյֆիւզի ամենակատարի և ամենապատանկից հակառակորդն է, խօսեցաւ 4 ժամ, բոլորովին անհիմն անուանարկութիւններ ընելով Տրէյֆիւզի վրայով և և եզրակացուց ըսելով, եթէ ինք Տրէյֆիւզի յանցապարտ ըլլալուն համոզուած չըլլար և եթէ 1899 էն ի վեր անոր դատարարութիւնը մարդկացուած չըլլար, ինք պատրաստ պիտի ըլլար խոտով անելու թէ սխալած է:

Այս պահուն Տրէյֆիւզի, կարծես այդ խօսքերուն ելեքարականացու մէջ կենդանացած. ուրքի վրայ ցաթ կեց և ահեղ ծայրով մը, որ թմարկի մը արոքիւնի պէս ամբողջ ժողովարար հը լեցուց, գոչեց. «Դու տեր ես, չարածնի»: Հանդիսականները բուռն կերպով ծափահարեցին:

Երբ Մէրսիէր պատասխանեց թէ Տրէյֆիւզի անմեղ պիտի ճանչնայ եթէ որ և է տարակոյս մը երեւայ. բանտարկեալը կրկին աղաղակեց. «Հապա էր չես խոտով անիլ» ասոր վրայ հանդիսականները կրկին մեղախանդավառու մով մը ծափահարեցին:

Երբ Մէրսիէր ժողովարարէն դուրս կելէր, ժողովուրդը հաւաքուեցաւ իր կողմը ու սկսեց սուլել և նախատական բացագանչուել իրենք ուղղել իրեն, որը մուկի պէս սուց կողմակի դռնէն դուրս: Երբ դուրս կելէր, դուրսը կեցող ժողովուրդը սկսեց ողջունել զինքը գոչելով «Կեցցէ՛ Մէրսիէր, կեցցէ՛ բանակը: Հոն մէկը, որ ներսէն կելէր, սուր ձայնով մը կը պոռայ. «Եթէ այդ հակամարդկային անուսկին ներսը խօ»

սածները լսած ըլլայիք, հիմա զինքը չէիք ողջունէր»:

Այս առումը երկրորդ նիստին ժողովարարին մէջ մի մատնաշար մարդերով լցուած էր:

Իմիջի այլոց վկայութիւն տալ սկսեց Գաղմիրիէրէր, նա շատ զօրաւոր կերպով հերքեց այն բոլոր փաստերուն հիմունքները որ իր օրով գործածուած էին Տրէյֆիւզի դէմ, ըստ թէ ոչ ինքն է ոչ ալ նախարարութեան գիււանք տեսած էին, Տօղիէր կոչուած գաղտնի գրութիւնները, մինչև Տրէյֆիւզի դատապարտուելէն 14 օր վերջը:

Նա բացազանչեց՝ ի սէր օրինաց և ի պատիւ Ֆրանսայի ինքզինքս պարտական կըզգամ խօսիլ ամբողջ ճշմարտութիւնը ի պաշտպանութիւն անմեղի մը:

Այս պատկանելի բացազանչութեան վրայ ժողովականները բռուն ծափահարութիւն մը սկսեցին մղելագին խանդավառութեանց արտասայտութիւնով մը:

Նա ըստ թէ իր հրատարակուած մէկ զլխարար պատճառն այն էր, որ զինք մութ կը պահէին Տրէյֆիւզը դատապարտելու խնդրոյն մէջ: Նա կրկին երդուելով կրկնեց, խօսքը ատենին ուղղելով կրկնեց, խօսքը ատենին ուղղելով. «Ես ինքզինքս ձեր արամագրութեան տակ կը դնեմ. պատրաստ եմ պատասխանելու ինծի ուղղուած ամեն հարցումի. իմ սերտագին բազանչեցի՝ ձեռնտու ըլլալ ճշմարտութիւնը փնտռելու մէջ»:

Ասոր վրայ կրկին բռուն ծափահարութիւն տեղի ունեցաւ:

Օգոստ. 14 ին Տրէյֆիւզի փաստարանը սպաննելու փորձ մը եղաւ. թէև ոճրագործը յաջողեցաւ ըրիզովը ի սեպի իրտուածով մը գետին տակալել փոստարանը, և նոյն ատեն վէրքը վտանգաւոր կ'երևար, բայց այժմ ըստ իր կրօնը կըսեն թէ մեռնելու վտանգը անցած է:

Ոճրագործը փախած է և գետ չեն կրցած գայն բռնել, որովհետև ոմանք կը համարեն անոր:

Կրտսի թէ ասիկայ մեծ դաւադրութեան մը սկիզբն է:

Լօնտօն Օգոստ. 15. — Ս. Բէթրըսպօրիկէն Տէյլի թէլէկրաֆին եկած հեռագրի մը համեմատ, կարգադրութիւն եղած է որ Չարը և Չարուհին այցելութիւն մը պիտի տան Անգլիայ Թագուհիին օգոստոսի վերջերը կամ սեպտեմբերի սկիզբները:

ՊԱՏՐԻԱՐԻ ՄԸ ՈՐ Կ'ԶՐՈՒՆՈՒ Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցիի Ծօնախմբութեան առթիւ արուած հացկերոյթի սեղանին նախագահը է Օրմանեան Պատրիարք:

Կերեր, խմեր, բաժակներ պարպեր են սուլթանին կենացը, պատրիարքին կենացը, շուն շնորին կենացը: Օրմանեան Պատրիարք, ճաշէն առաջ, օղիին աղքեցութեան տակ, քմահաճոյքը ունեցեր է խորակացուցակը հայերէնի թարգմանելու, բան մը որ սեղանակիցներու թօհաֆին եկեր է և ճաշի միջոցին բաւական կատարարութեան նիւթ հայթայթեր:

—Ռուսական թերթերը կը գրեն թէ, Ս. Էջմիածնի Սինօզի պրօպագանդիստները այս օրերս Տրօֆիւզի պիտի երթայ պաշտօնական գործերու համար: Այս վերջին բառերը բաւական առաձգական են, բայց կը կարծուի որ Գանչելին նոր հրահանգներ պիտի առնէ կովկասի կառավարչապետին իր պաշտօնին մէջ ընդլայնուելու համար, թէպէտ միւս կողմանէ ռուսական թերթերը կը գրեն որ կալիցին իշխան շուտով չի դառնար Տրօֆիւզի:

ՍՐԲԱՋԱՆ ՍԱՐԱՃՆԱՆ ԵՒ ԻՒՐ ԶՐՊԱՐՏԻՉԸ

Պուլղարիոյ «Եարժու» անուն թերթը կարգաւոր պատեհութիւն չունիմ, անցեալներ բարեկամ մը, այդ թերթէն բանասիրական կտրոն մը զրկած էր ինձ:

Պարսկաստանէն մի օմն «Գնդակ» թաւրիգէն մինչև վառնա սուտի գնտակ մը գրորած էր: Որպէս թէ՛ Սրբազան Սարաճեան հոն Առաջնորդական Տեղապահ եղած ժամանակ Սալմաստի մէջ բանտարկուած Ռուսահայ երիտասարդի մը իսկական անունը Մէկի միջոցաւ Ռուսաց հիւպատոսարանին մատնած է:

Բայց իրականութիւնը: Երբ այդ երիտասարդը (որու անունը իրենք ալ յայտնած չըլլալուն մենք ալ կը լռենք) բանտարկուած էր Սալմաստ, թաւրիգի դաշնակցութեան ներկայացուցիչ Զ. Ս. Պ. կը դիմէ Սրբազան Սարաճեանին, որ ռուսական հիւպատոսին՝ անոր ռուսական հպատակութիւնը յայտնելով՝ պաշտպանութիւն խնդրէ և զանի ազատէ: Թողուցէ այն որ Սրբազան այն ժամանակ գտնուած էր ռուսական հիւպատոսին, կը մերժէ, առարկելով թէ՛ թո՛ղ ժամանակ մը Սալմաստ բանտինայ, մինչև որ արուստներ պատճառաւ յառաջացած փոթորիկներն անցնին, ինք այն ժամանակ պիտի կրնայ Պարսիկ կառավարութեան միջոցաւ ազատել զանի, իսկ թէ ռուսաց ձեռք անցնի ինքը ընդհանրապէս թերթի չի կրնար ընել: Զ. Ս. Պ. չանաւայով Սրբազանին՝ կը դիմէ այն Մէկին, (այն անձը, որու միջոցաւ որպէս թէ Սրբազան յայտնած է գօնուելին) և այդ Մէկը այն ժամանակ Ռուսաց վաճառականակա Ս. Յ. էր, և անկէ կը խնդրէ որ Ռուսաց հիւպատոսարանին պաշտպանութեամբ ազատէ Սալմաստի բանտարկեալը: Ռուսաց հիւպատոսը տեղեկանալուն պէս, Սալմաստին բերել կուտայ բանտարկեալը և քանի մը օր թաւրիգ պահելէ զինի, Ռուսիա կուղարկէ: Բանի մը ամիս Թիֆլիզ բանտ մնալէ յետոյ կարողուի Աստրախան:

Այժմ ո՞վ է մատնիչը: Գնդակը իր ատ սողերը գրած ժամանակ քովիններուն չի՞ գործեր և ըսեր՝ սիրուն սուս մը գործեցի:

Եթէ հոն ըլլայի պիտի ըսէի «կեցե՛ն» գիւտ ըրիր»:

ԶԱՆԳԱԿ

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՃ ՊԱՏԱՍՈՒՆ ՄԸ

ՏԻԳՐԻՍԻ 86դ թուոյն մէջ երևցած Մասնաճիւղիս յայտարարութեան նկատմամբ, թէ Լօրէնի Գաշակցական Կոմիտէն և թէ Պրն. Ա. Սարգիսեանէ յերիւրուած սուտու մուս պատասխաններուն վերջնական լուսաբանութիւն մը ընել Մասնաճիւղս ինքզինքը պարտական կըզգայ: Պրն. Սարգիսեան կը գրէր թէ անձանօթի մը կողմէ իրեն խրկուած է գողցուած նամակը. մէկ կողմ թողլով սոյն հատուածի արամարանական մասը, կը բաւականանք միայն յայտարարելու թէ, այն նամակը որ ինք թէ գողցուած նամակին հետ ներփակ իրեն խրկուած է. յանձնարարի առջև քննուելով հաստատուեցաւ, թէ ըստ իր ձեռագիր յորինուածքն է:

Արդ ինչպէս առաջ նոյնպէս հիմակ ալ հրապարակաւ իր դաշնակցական մը չըլլալը կը յայտարարէ, ծանօթ նկատուեմիտով. առ այդ մէջ կը բերենք յիշատակ կողմէ Մասնաճիւղիս իրական նամակէն նախագահ

սութիւն մը՝ «Լաւ կըլլայ որ այս խնդիրը անուշ անղը կապենք որպէս զի մեր թշնամիները վրանիս չի խնդան» թշնամի ըսելով պէտք է հասկնաք ժողովուրդը. ըսել է որ պարտնը ժողովրդի հասարակ խաւէն դուրս ապրող մ'է, պարզ խօսքով կուսակցական մը. առկից զատ քանիցս Գաշակցականներու հրապարակային ժողովներու մէջ ճառ խօսած է՝ ի նպատակ դաշնակցութեան դաւաճարին: Սիւլիբիոյ քարտկանները ճանչցուելու համար Ռուս կառավարութիւնը անոնց գլխաւն մագերը կ'ածիլէ: Գաշակցութեան կնիքն ալ անպատճառ այդ պարունի ճակտին գամուելու՞ էր: Ինչպէս կ'երևի Պրն. Սարգիսեան իր բարոյական անկումը մասնանիշ ընելէ անդին չանցնիր և Մասնաճիւղս իրեն նուսաստութիւն պիտի համարի յետ այսու յիշատակ հետ չափուել:

Իսկ գալով Գաշակցութեան կոմիտէին կը թելադրենք որ եթէ այդքան նախանձանիքի է իր մէջ մի ընկերքը՝ բարոյական նկարագրին ու պատւոյն՝ թող հաճի դիմել յիշեալ Պարսիկ և անկից իմանալ ամեն բան, քանի որ նա յանձնարարաւ ըն ըստ թէ — եթէ իմ դաշնակցական ըլլալու հաստատեք պէտք է գիտնաք որ ձեր գողերը դաշնակցականներն են, առկից զատ թղթատան պաշտօնէին վկայութիւնն ալ կարեւոր տեղ մը կրնայ բռնել:

ՉԶ. Ա.ՉԳ. ՅԵՂ. ԿՈՒՍԱԿ-ՑՈՒԹԵԱՆ ԼՕՐԷՆՍԻ ՄԱՍՆԱՃԻՒԴ: ԼՕՐԷՆՍ Օգոստ. 11. 1899

Տէր Խմբագիր.

«Հայրենիք» թիւ 15ի մէջ Նաչուայէն նամակ մը կարգադրի, որուն մէջ մեր Արտաքաղցի ձեռնուեալին վերաբարձն կը տեղեկացնէ նամակագիրը: Արդեօք մեր հաշիւներ լ'նչպէս հասկցած է, թէ իր անհաստական կարծիքը իբրև իրողութիւն կը հաղորդէ: Պրն. Չաքար Պոյաճեան ալ Արտաքաղցի մասին ոչ ոչ թէ նիւթական նկատուեմներով ալ իր գիտական հետաքրքրութեանց գոհացում տալու համար, աւելի ներս գնաց հետազոտութիւններ ընելու: Իր Յուլիոսի նամակը կ'ստանանք Սէնթ Մայքլէն, որ կը գրէ թէ 1800 մղոն ներս գացած է դէպի Բէյրութ:

Ահա այսպէս, մեր յաջող կամ անյաջող ըլլալու մասին ոչ ոքի տեղեկութիւն տալ որոշած ենք: Հետեւաբար կը հերքենք «Հայրենիք» մէջ գրուած այդ կարծիքը: Ե. Բ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՕՍԹՈՆ Օգոստ. 9. 99.

Վառնայի մէջ հրատարակուող Եարժու լրագրի յուլիս 7, (2 սուրի թիւ 143) թուոյն մէջ Պօսթօնէն Լէօ ստորագրութեամբ մի նամակ կար, որ ի միջի այլոց կըսէ. «Սարաճեան Սրբազանը գնացած է Նիւ Եօրթ թուրք դեսպանին իր երախտագրութեան յայտնելէ վերջ խոստացած է որ Նիւ Եօրթի մէջ հրատարակուող հայերէն թերթերն ալ ջանայ դադարեցնել:

Նախ պէտք է Պրն. Լէօի դիմաւոր վար առնենք և իր իսկական անունով ներկայացնենք հասարակութեան, Պրն. Ա. Լեւոնեան, որ երբեմն ուրիշ կեղծ անունով կը նկատուի սպարէզ գիտցած ու շփոթածն կը գրէ, ան ալ ցատկելով Աղլանեանի միւս ծայրը: Մինչդեռ Նիւ Եօրթի մէջ երկու հայ թերթեր ունինք, կըր-

նար տեղական խնդիրներ տեղական թերթերու մէջ տալ. բայց խնդիրը հոտ չէ. պարտնը որ աչքով տեսաւ որ Սրբազանը իր երախտագրութեանը կը մատուցանէ դեսպանին, կամ ի՞նչ երկայն ակունք ունի կըրք որ Նիւ Եօրթի մէջ եղած խօսակցութիւնը առանց Նիւ Եօրթի ժողովուրդը գիտնալու ինքը կարող եղած է ընել մինչև Պօսթօնէն. մինչդեռ Նիւ Եօրթի մէջ եղած հայ թերթերն ատանկ բան մը ըլլար՝ վստահ կնք որ անմիջապէս երևան կը հանէին. պարտնը իր գրութեան մէջ յայտնած չէր թէ ինչ պատճառաւ Սրբազանը թիւրք դեսպանին երախտագր կը յայտնէ անուշաւ պատճառ մը ունենալու էր:

Այս անգամ առայտ միայն գրելով կը լուսականանք և կը իրտեսնք Պրն. Լեւոնեան, որ լուր մը չհաղորդած՝ աղէկ մը սուտեզ անոր ճշդութիւնը. մենք քանի անգամ իր գրածները մէջ այնպիսի կէտեր տեսանք որ բոլորովին անհիմն են. եթէ բանի մը վրայ աղէկ տեղեկութիւն չունի թող չգրէ, եթէ փորձէ ուրիշ անգամ անտեղի լուրեր տալ թերթերուն, հրապարակաւ պիտի խայտառակենք: Գիտնալու է որ ժողովուրդը թերթ կը կարգայ բան հասկնալու և կամ ստոյգ լուր առնելու համար:

Ա. Մ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Յառաջիկայ Հինգերթի» (Օգոստոս 24) կէսօրէ վերջ ժամը ճիշդ 2 իւ՝ տեղի պիտի ունենայ Տիֆլիսից Առաջին Լսարանը ի Պոսթօն, 135 թրիմոնթ սթրիտ, մեր սովորական մատարն մէջ: Հոն պիտի խօսի մեր հայ տիկիններէն՝ Կ. Պոլսոյ Ամբերիկեան Հօմ քօլէճի ընթացաւարտ Տիկին Վերջինիս Զ. Թոմսոն, Նիւթ ունենալով:

Կիներու արգելիչ դերը լարնագործական տապալիքի մէջ:

Անկէջ վերջ պիտի հրատարակուի նորակազմ Պոսթօնի Հայուհեաց Ընկերակցութեան գործող իր մարմնոյ ընտրութիւնը, ինչպէս որոշուած է Օգոստ. 10 ի ընդհ. ժողովի մէջ՝ ծրագրին համեմատ:

Կը հրաւիրուի Պոսթօնի և շրջակայից բոլոր Հայ կիները, առանց ունէ խորութեան:

Թեմակալ Հովիւ Պոսթօնի ՄԱՇԻՈՑ ՎՍՐԴԱՊԵՏ

ՄԻՀՐԱՆ ԽԱՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ M. Harpoitian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանադրական ճիւղը՝ իր ձեռամբ դարձ գրկողներէն գնահատելի կերպով քաջաբերակ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած գոհողութիւնը չենք զըլացած գործին միջոց ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովուրդեան և մասնաւորապէս մեր տան անձնօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐԲՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂՐԱՐԻՍ ԽԱՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել ըստ 10,000 Օմմ. ոսկւոյ անշարժ ստացուածքը իր սոյն փոխգրի գործոյն երաշխաւորութիւնն է, յաշտ անոնց որոնք կուզեն զբաւմնի վստահելի միջոցով զրկել: Ուստի կը յուսանք թէ Հայ հասարակութիւնը չպիտի վարանի իրրև ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իր դրամը, որ կրնանք փոխանակագիր տալ Խարբերի, Տիգրանակերտի, Բիւրի, Բալուի, Բերրիի, Մալաթիայի, Սեւազի, Կ.Պօլսի, նաև Տաճ, բոլոր քաղաքացի համար: (Ինձ դրամ՝ զրկողներն ապահովագրութեան համար՝ Նէշընլ Պանքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են): Հայրենիքի մէջ ո՞նէ գործ տեսնելու կամ գործադրման օգնելու համար՝ պատրաստ եմ եղբորս Երանտի թիւն էֆի ձեռամբ կատարել տալ և Հեռագրով և նամակով դրամ և կամ նաւային թիքէթներ կրնամ զըրկել Մարտիկայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Սէլիմէն մեզ կը գրէ Պրն. Ս. Ամայոյ 13ին Տեղւոյ վերահաղմ շին- շահեան հրատարակչոյն ժողովը տե- ղի ունեցաւ, ուր խօսեցան Պատ. Մ. Յովհաննէսեան նիւթ ունենալով «ինչ է մարդը» և Տխար Կ. Փարիզ- ան» Հայրենասիրութեան վրայ. ասե- նախօք կարող կերպով բացատրեցին իրենց նիւթեր որով ունենալիք զո՛հ մնացին: Երեկոյան ալ Հայր Մաշտոց կարճ արարողութիւնէ մը վերջ ըս- նախօքութիւն մը ըրաւ Ազգ. պատ- մութեան վրայ սկզբից մինչև Գո. է 828 ասորի առջը որուն շարունակու- թիւնը պիտի ընէ ամեն անգամին որ երեկոյան արարողութիւն ընել զայ տեսաւ. անշուշտ խիստ զովելի է և շատ գո՛հ պիտի մնանք:

Նիւ Եօրթի Հ. Ե. Թանգարանի Միութեան Գաղտնիքի հանգէսը տե- ղի ունեցաւ անցեալ կիրակի: Հայ երկուսն խառն բազմութիւն մը փութացած էր, ուր երկար ատեն շտեղծուած ծանօթներու ներկայու- թիւնն ալ վայելելու լաւ առիթ մը եղաւ: Այս անգամ գեղեցիկ սեռի մեծ բազմութիւնը նկատելի էր: Այլ և այլ խաղեր եղան և երգեր երգուեցան, սակայն ամենէն ուշա- գրաւն էր Հայկազեան կաճառի զին- ուսարական մարզանքն, որ շատ վարժ կերպով յաջողեցան կատարել: Ժողովուրդը զո՛հ ու ուրախ աը- պաւսրութեան տակ հեռացաւ:

Համբարէն Տիկին Զարուհի Պոյաճ- եանէ ստացած մէկ տուր ի նպաստ վանի սովեակներուն: —Վանի սովեակ Նիւ Եօրթի հան- գանախօթեան Բ. ցուցակը պիտի հը- րատարակենք յաճորդ անգամ:

Փրովիանտէն մեզ կը գրեն. — Անցեալ կիրակի հոս տեղի ունեցաւ Հնչ. Ազգ. կուսակցութեան հրատար- ակչոյն ժողովը, ժողովուրդն ամեն անգամ ալ զո՛հ մնացած ըլլալով ի- րենց ժողովներէն, այս անգամ ալ փութացած էր ստուար բազմու- թեամբ մը յարգել Հայ երիտասարդ յեղափոխականներու հրաւերը: Առա- ջին ատենախօսն էր Պրն. Ալան էլ- մասեան, մարաշցի, կիլիկիոյ անցեալ ու ներկայ յեղափոխական գործու- նէութեան մասին տեղեկութիւններ տուաւ: Ապա տանախօսեց Պրն. Յ. Յակոբեան յեղափոխութեան ներկայի մասին. ցոյց տուաւ թէ զիւստիքի- մութիւնը ինչ տան կրնայ նպաս- տել, Ռուսիոյ մասին խօսալով՝ պատ- մական տեսութիւն մը ըրաւ Հայոց ու Ռուսոյ յարաբերութեան վրայ ժ. Զ. դարէն մինչև ներկայ օրեր: Մեր ազ- գի փրկութիւնը միայն ազգային յե- ղափոխութեան մէջ գտաւ, հակառակ կարծիք յայտնեց կուսակցութեանց միութեան մասին, և ուր կայ գաղա- փարի տարբերութիւն հոն անպայման կերպով կայ և կուսակցութիւն, միութ- թիւնը՝ ժողովուրդի միութիւնն պիտի ըլլայ, ասով միայն գործը կ'օգրանայ ու նպատակին կը հասնի, մերջացուց իւր խօսքը աւելցնելով այն ամեն գործեր որոնք ազգային են, յեղափո- խական քայլեր են:

Վերջը ատենախօսեց Պրն. Գ. Պ. Զրթմեան, դարձեալ յեղափոխութեան մասին էր որ կը խօսէր իւր սովորա- կան պերճախօսութեամբ: Բացատրեց լուրջ ու զրոտակից ուղղութեան ան- հրաժեշտութիւնը, օրինակներն էին պարզ ու ժողովրդական: Երգուեցան երգեր, որոնցմէ Տիկին Հայկանուշի՝ Զարթիր Որդեակը արժանացաւ բոլոր ծափահարու- թեանց:

Ճ Ա Շ Ա Ր Ա Ն
Մ ար տ ր ո ո Ռ ու ւ ր ն և ն ի
Ս է ն թ ր ը Ծ օ յ ւ 20 Զ ար ը ս ս թ.
Ճաշարանի կանոնադրութիւն, կարգապահութիւն ու մանուսնդ կե- րակութիւնը մաքրութիւնը յաճա- խորդներու խիստ գո՛հ կացուցած է ինձմէ: Ճաշարանի մէջ նորեկներ ու հիւրեր կը հիւրասիրուին, իսկ անկարողներուն ձրի ճաշ կը տրուի: Մեր հայրենակիցները, ուրիշ ճա- շարաններ փորձելէ յետոյ, նորէն թող հաճին մեր ճաշարանը փորձել: Ճաշարանապետ Մ. ՌՈՒԲԻՆԵԱՆ
1—2

Ա Չ Գ
42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմքուր վրայ վե- րակազմուած ըլլալով՝ իւր մարզու- թիւնները կը շարունակէ ի թիւ 498 Յրդ Ամբի 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուր- բաթ իրիկուններ ժամը 8էն 10ը:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ս, Տ ա մ ա ղ ւ ր ա ճ ե ա ն
509 2րդ Ամբի. 28 և 29րդ փողոցի մէջ
Մենք կը ծախենք արեւելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէն- ներ. թարմ բանջարեղէն, պաուզ և առօրեայ թարմ միս: Ռուսիի պատուական պըրլուրը և ծեծածը փաւընաը 3 սէնթ, 25փաւընա կամ աւելի գինովներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընաը 12, իսկ մեծ քանակ գինովն համար 10 սէնթի: Ժրթապուղին փաւընաը 10 շատ գինովներուն համար 9 սէնթի, Ժրթապուղի պատուական իւղին կ'ընէ \$1.40 կը ծախուի: Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ս, Տ ա մ ա ղ ւ ր ա ճ ե ա ն
509 2րդ Ամբի. 28 և 29րդ փողոցի մէջ
Մենք կը ծախենք արեւելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէն- ներ. թարմ բանջարեղէն, պաուզ և առօրեայ թարմ միս: Ռուսիի պատուական պըրլուրը և ծեծածը փաւընաը 3 սէնթ, 25փաւընա կամ աւելի գինովներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընաը 12, իսկ մեծ քանակ գինովն համար 10 սէնթի: Ժրթապուղին փաւընաը 10 շատ գինովներուն համար 9 սէնթի, Ժրթապուղի պատուական իւղին կ'ընէ \$1.40 կը ծախուի: Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

The Equitable Life Ins. Society of the U. S
«Էքուիթեյլ»
Աշխարհի հզօրագոյն և լուսագոյն կենաց Ապահովագրական Ընկերու- թիւնը:
Ամեն հասակի և վիճակի տէր ան- ձանց համար ապահովագրի կրտսոյ, ի դէպս մահու կամ 15—20—25 տա- րիէն վճարելի՝ զի՞նչ ուղուի:
Օտար երկրներէ կամ ներսի նա- հանգներէն փախուցողը կրնան դիւ- րաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել ալ:
Հրդեհի դէմ ևս կապահովա- գրում:
(Գործակալ)
ԿՐԱԿԵՏ ՊԻԻՐԻՆՆՃԻԿ
164 E. 27th St. New York

ՃԱՇԱՐԱՆ
805 Մէյն փողոց Փարիզըն
Պատիւ ունինք ծանուցանելու թէ սասունէն առնուած ճաշարանը նախանձելի դիրքի մը մէջ գրուելու համար ամէն կարելի միջոց պիտի գործածենք, անանկ որ մեր յաճա- խորդները գո՛հ ըլլան. մեր խոհարարին երկար ամառ փորձառութիւնը ինքնին երաշխաւորութեան է թէ կը բակուրները համեմ և մաքուր պիտի մլլան: Բորձ մը միայն ձեզ գո՛հ պի- տի ընէ:
Թ, Ա, ԱՆՏՈՆԵԱՆ


ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր
(Մեր կեանքէն)
Գրեց
Վ. ՇԱՀԷՆԻ
Գինը 15 սէնթ: Քսան օրինակ գնողին մի օրինակ նուէր կը տրուի: Դիմել հեղինակին, Խմբագրութեան հասցէին:
Ն Ո Ր Կ Ա Ե Ն Ք
Հ Ա Ն Դ Ի Ս Ա Չ Գ Ս Ե Ր Ն, Գ Ր Ա Կ Ա Ն Ե Ի
Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն
Ամէն անոնք, որ կուզեն ազգա- յին հին ու նոր կեանքին և յեղափո- խական անցեալ ու ներկայ ուղղու- թիւններուն անցեալ ըլլալ, անոնք որ կուզեն հայկական գեղեցկագոյն գրիչներէն արտադրուած հմաւից գրութիւններ և շահեկան երգիծարա- նութիւններ կարգաւ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կարգաւու են:
Տարեկան բաժանորդագրին է 2 տարւ. վեցամսեայ՝ 1 տարւ:
Նոր կեանքի Նիւ Եօրթի գործա- կալն է Պրն. Անտոն Թագուրեան և հասցէն՝
343 Իսթ 34րդ Փողոց:
Նոր կեանքի բաժանորդներուն Պարտաը ձրի կը ղրկուի.
Խմբագրութեան հասցէն է,
L. FRANK
32 CHESTERTON ROAD
LONDON W. ENGLAND

Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ս, Տ ա մ ա ղ ւ ր ա ճ ե ա ն
509 2րդ Ամբի. 28 և 29րդ փողոցի մէջ
Մենք կը ծախենք արեւելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէն- ներ. թարմ բանջարեղէն, պաուզ և առօրեայ թարմ միս: Ռուսիի պատուական պըրլուրը և ծեծածը փաւընաը 3 սէնթ, 25փաւընա կամ աւելի գինովներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընաը 12, իսկ մեծ քանակ գինովն համար 10 սէնթի: Ժրթապուղին փաւընաը 10 շատ գինովներուն համար 9 սէնթի, Ժրթապուղի պատուական իւղին կ'ընէ \$1.40 կը ծախուի: Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:

Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ս, Տ ա մ ա ղ ւ ր ա ճ ե ա ն
509 2րդ Ամբի. 28 և 29րդ փողոցի մէջ
Մենք կը ծախենք արեւելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէն- ներ. թարմ բանջարեղէն, պաուզ և առօրեայ թարմ միս: Ռուսիի պատուական պըրլուրը և ծեծածը փաւընաը 3 սէնթ, 25փաւընա կամ աւելի գինովներուն համար 2 1/2 սէնթի, Հայկական պանիրին փաւընաը 12, իսկ մեծ քանակ գինովն համար 10 սէնթի: Ժրթապուղին փաւընաը 10 շատ գինովներուն համար 9 սէնթի, Ժրթապուղի պատուական իւղին կ'ընէ \$1.40 կը ծախուի: Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:


Մ Ե Ր Ո Ւ Ր Ի Ն Ո Ր Գ Ո Ր Մ Ա Ր Ա Ն
Այս նոր ընկերութիւնը կ'արտադ- րէ շատ լաւ և աժան պղուր և ծե- ծած:
Մեծաքանակ գնողաց համար գինն է 2 1/2 սէնթ փաւընաը:
Մանրամասն տեղեկութիւն ուղղո- ներ պէտք է դիմեն հետեւեալ հաս- ցէին:
NEW YORK
BULGOOR MANUFACTURING CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

Պ Ե Ր Ո Ւ Ր Ի Ն Ո Ր Գ Ո Ր Մ Ա Ր Ա Ն
Այս նոր ընկերութիւնը կ'արտադ- րէ շատ լաւ և աժան պղուր և ծե- ծած:
Մեծաքանակ գնողաց համար գինն է 2 1/2 սէնթ փաւընաը:
Մանրամասն տեղեկութիւն ուղղո- ներ պէտք է դիմեն հետեւեալ հաս- ցէին:
NEW YORK
BULGOOR MANUFACTURING CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.



Պերլինի համալսարանէն վկայեալ Տ. Ք. Ք. Է. Քիլ պատրաստ է անհնազուարթին մասնա- լորապէս գաղանի կոչ- ուած ակտորութեան չը բուժուող հիւանդին դրամը ետ կը տրուի: Շատ մը հայեր մեծ գոհա- ցում գտեր են իրմէ: Հայոց համար վճարները շատ չափաւոր են: ՕՓիսը 508 Երդ. Ամբի 52րդ. փողոցի ան- կիւնն է: Առաւօտեան ժամը 9էն ի- րիկուան 5ը, իսկ կիրակիները՝ 9էն 12 օՓիսը կը գտնուի: 10—12

Ա Չ Գ
Պ ու ղ ու ր ի մ ի ա ճ ե ա լ ը ն կ ե ր ո թ ի ն
Նոր չենք. ասորիներէ ի վեր է որ մեր գործարանին մէջ կը պատրաս- տենք ամենա ընտիր ցորենէ պուլուր որ քար չունի. գէշ հօտ չունի և մեր հայրենիքի պուլուրին համը կուտայ որը թէ տանախօսներու և թէ ճաշա- րանապետներու գոհունակութեան արժանացած է: մեր պուլուրէն գո՛հ չ'մնարողն գրամը ետ տալու սիրա- յօժար ենք:
Մեր գները խիստ չափաւոր են: կը ծախենք տաճկական ամէն կարգի սպրանքներ ևս:
Դիմել:
Burgul Mfg. Co.
161 Union St., Worcester, Mas



Դ Ե Ր Չ Ա Կ
Յ Ա Կ Ո Ր Ո Ւ Չ Ո Ւ Ն Ե Ա Ն
159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանդերձ կը փնտռէք, անանկ չէ՞. — մինք սուղ կը շինենք — բայց չէ. մեր գործին որքա՛ն աժան ըլլալը ասան մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց դրամը անարժէք սպրանքի տուած ըլլալու զղուճը չեն ու զեր ունենալ և նոյն ատեն լաւ հանդի մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն հա- մար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական սպրանք միայն կը գործածենք:
Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն աժան պատրաստի հան- դերձ ալ կը ծախենք. նաև կը նորո- զենք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:
Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառ- նենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ:

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Ի Չ
Տ Ի Գ Ր Ա Ն ձ. Մ Ե Լ Բ Ո Ւ Ն Ե Ա Ն
Elite photo Studio
182 Main Street, Paterson, N. J.
Պատիւ ունինք ծանուցանելու Հայ հասարակութեան թէ յաջողած եմ ձոխ և առաջնակարգ լուսանկարչա- տուն մը հաստատել Փէթրոնի մէջ ուր կը հրաւիրեմ հայրենակիցներս իրենց լուսանկարները հանել տալու, խիստ չափաւոր գներով: Երկար տա- րիներու փորձառութիւն ունիմ ար- հեստիս բոլոր ճիւղերուն մէջ. պատ- կեր մեծցունել, ընդօրինակել, շրջա- նակ շինել և այլն:
Նիւ Եօրթէն ու Նիւ Ճրզիէն եկող- ներուն ծամրու սոճներու գինը ետ կը վճարեն:
Կը յուսամ թէ շատ հայրենակց- ներ թէ չափաւոր գնով խիստ գոհա- ցուցիչ լուսանկարներ ունենալու թէ ամառնային զուարճալի ճամբորդու- թիւն մը ընելու և թէ մեզ քաջալի- րելու համար պիտի դիմեն մեզ:
Քոյս կը ծախուին Հայրիկի, Իգ- միրեանի և Մայր Հայաստանի լուսա- նկարները:
Մանրամասնութեանց համար դի- մել ինձ նամակու կամ անձամբ: